



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի №---Ա
քաղ. Երևան

**«ՅՈՒՔՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի №01/11.1/8013-18 և «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի ապրիլի 26-ի N 617 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ կանոնադրական կապիտալի ավելացման ճանապարհով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների կազմում նոր մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սուրիկ Սիրակի Պողոսյանի ընդգրկմանը և դրա արդյունքում ընկերության մասնակիցների բաժնեմասերի ձևավորված հարաբերակցությանն ու գրավադրմանն՝ ըստ ստորև բերված աղյուսակի.

№	ՄԱՍՆԱԿԻՑ	ԲԱԺՆԵՄԱՍ (%)			
		Ընդամենը	Գրավադրված		
			«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՄԵՐԻԱ Բանկ» ՓԲԸ
1	«ԱյՅու Թեկքոմյունիքեյթ» ՍՊԸ	29.09306722689080	29.09306722689080	0	0
2	Արամ Խաչատրյան	24.34260504201680	11.42172268907560	8.83567226890756	4.08521008403361
3	Գուրգեն Խաչատրյան	11.90894957983190	11.90894957983190	0	0
4	Արտյոմ Խաչատրյան	11.90894957983190	11.90894957983190	0	0
5	«ՖՈՐԱ-ԲԱՆԿ» ԲԱԲ	10.50348739495800	0	0	0
6	Սուրիկ Պողոսյան	6.30252100840336	4.72689075630252	0.594327731092436	0.274789915966386
7	Հայկ Եսայան	2.97021008403362	2.97021008403362	0	0
8	Ալեքսանդր Եսայան	2.97021008403362	2.97021008403362	0	0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան

----- 2018թ.